

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԸ

Վահագն Դադրյանի պայծառ հիշատակին*

Բանալի բառեր - Վահագն Դադրյան, ցեղասպանագիտություն, աղբյուրներ, թուրքական դատական ատյաններ, Ռիչարդ Հովհաննիսյան, Մեծ եղեռն, Հոլոքոստ, թուրքական ժխտողականություն, խեղաթյուրում, կեղծարարություն:



Վահագն Դադրյանն այն գիտնականներից էր, ով արդեն իր երկրային կյանքի ընթացքում դասական էր դարձել: Մեզանից շատերը նրա աշխատանքներից տպավորված՝ ներգրավվեցին ցեղասպանագիտության ոլորտ, նրա մոտեցումները ամբողջ մի գիտաճյուղ ստեղծեցին, և նույնիսկ նրանք, ովքեր չէին կիսում Դադրյանի տեսական հիմնադրույթները, ընդունում էին նրա մեծությունը: Իսկ թուրքական ժխտողականության համար Վահագն Դադրյանը դարձել էր թիվ մեկ հակառակորդը:

* Ընդունվել է տպագրության 05.09.2019:

1. Մուտքը գիտության ասպարեզ

Վահագն Նորայր Դադրյանը ծնվել է 1926 թ. մայիսի 26-ին Կ.Պոլսում, որտեղ Հայոց ցեղասպանության թեման միշտ շրջապատել է նրան: Իր չորումցի ընտանիքը բազմաթիվ կորուստներ էր ունեցել Մեծ եղեռնի տարիներին, իսկ հորեղբայրը՝ Վահրամ Դադրյանը, չափազանց հետաքրքրաշարժ ու տպավորիչ հուշեր էր թողել՝ ներկայացնելով իր ընտանիքի ողբասկանը տեղահանության ճանապարհին¹:

Վահագնի մանկական հիշողություններում պահպանվել էին դրվագներ, երբ եղեռնը վերապրած հայ կանայք տարբեր առիթներով հավաքվում էին թաքուն զրույցների, որոնցում մշտապես հնչում էր «ջարդ» սարսափազդու բառը: Սակայն այդ ժամանակ նա բոլորովին անտեղյակ էր կատարվածից, քանի որ Կ.Պոլսի հայ ընտանիքներում կար այդ թեման չբարձրաձայնելու ընդունված սովորություն, ավելին՝ քեմալական Թուրքիայում Հայոց ցեղասպանության հիշատակումը պաշտոնապես արգելված էր²:

Համալսարանական կրթություն ստանալու համար Վ.Դադրյանը մեկնում է Բեռլին, որտեղ ուսանում է մաթեմատիկա, հետագայում տեղափոխվում է Վիեննայի համալսարան, բայց որոշ ժամանակ անց ամբողջովին փոխում է իր կրթության ուղղվածությունը, տեղափոխվում Վիեննայի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետ: Պատճառը ավստրիացի դասախոսներից մեկն էր, ով, իմանալով ուսանողի հայ լինելը, հարցրել էր՝ արդյո՞ք Վահագնը կարդացել է Ֆ.Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը՝ ստանալով պատասխան, որ այդ գիրքն արգելված է Թուրքիայում:

Մուսա լեռան հերոսամարտի մասին պատմող վեպը ցնցում է երիտասարդին³, ուստի հետագայում Վ. Դադրյանը շարունակում է իր կրթությունն արդեն Ցյուրիխի համալսարանում՝ մասնագիտանալով միջազգային իրավունքի մեջ: Իր ատենախոսությունը նա գրում է սոցիոլոգիայի մասնագիտացմամբ՝ 1954 թ. Չիկագոյի համալսարանում ստանալով դոկտորի որակավորում⁴: Նրա հետազոտության շրջանակը ներառում էր ոչ միատարր սոցիալական համակարգերում գերիշխող խմբի և փոքրամասնության հարաբերությունները: Վ.Դադրյանը եկել էր այն հա-

1 Տե՛ս **Տադրեան Վ.**, Դէպի անապատ: Փրցուած էջեր օրագրէս, Նիւ Եորք, տպ. «Վոչնակ», 1945:
 2 Տե՛ս **Dadrian V.**, The Quest for Scholarship in My Pathos for the Armenian Tragedy and Its Victims, Pioneers of Genocide Studies (ed. **Totten S., Jacobs S. L.**), “Transaction Publishers”, 2010, էջ 235-236:
 3 Տե՛ս **Татрян В.** Боюсь не успеть осуществить все задуманное. Беседа с историком, геноцидоведом В. Татряном. Записала **А. Гулакян**, «Голос Армении», 21.11.2002, էջ 1,5:
 4 Տե՛ս Genocide Studies Pioneer Vahakn Dadrian Dies, “The Armenian Mirror-Spectator”, 8. 8. 2019:

մոզմանը, որ նման հարաբերությունները շատ հաճախ բերում են հակամարտության, որի հետևանքով փոքրամասնությունները զոհականացվում են (victimized): Այս պարագայում կենտրոնական է դառնում իշխանության մեջ փոխհարաբերությունների ուսումնասիրությունը: Նախապաշարմունքը, խտրականությունը և մերժումը իրենց հերթին կիրառվում են ամենամեծ փոքրամասնության խմբի անդամների նկատմամբ գերակա իշխանություն ստանալու համար:

Վ.Դադրյանի այս հետազոտությունը, թեև չափազանց նախնական ձևով, սակայն, ուրվագծում էր կոնցեպտուալ կապը Հայոց ցեղասպանության ուսումնասիրության թեմայի հետ, որում գիտնական Վ.Դադրյանը ներգրավվելու էր հետագայում⁵: Սկզբնական շրջանում, քանի դեռ նա ներգրավված էր կոնֆլիկտաբանության ոլորտում, Վ.Դադրյանի կապը Հոլոքոստի ուսումնասիրությունների հետ ավելի մեծ էր: Մինչ այդ իր ուսուցիչներից մեկը՝ Լուիս Վիրթը, ուսումնասիրել էր Մայնի Ֆրանկֆուրտի հրեական գետտոյի կյանքը և հրեաների հետագա զոհաբանությունը Գերմանիայում⁶: Ուստի Վահագնը հետզհետե փորձում էր իր տեսական գիտելիքները տեղայնացնել հայկական օրինակում: Այդ նույն տարիներին հայկական թեմայի նկատմամբ հետաքրքրությունը գնալով աճում էր: Նա ծանոթանում է մի շարք գրքերի հետ, որոնք շրջադարձային են դառնում իր համար: Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը»⁷ գրքին հետևեցին Գ. Պալաքյանի «Հայ գողգոթան»⁸, Հենրի Մորգենթաուի հուշերը⁹, որոնք գիտական նոր հորիզոններ են բացում նրա առաջ¹⁰:

1964 թ. Դադրյանը Հայոց ցեղասպանության վերաբերյալ մի հոդված է տպագրում «Նյու Յորք Թայմս» թերթում և շուտով նամակ ստանում պատմաբան, հայ կաթոլիկ հոգևորական հայր Գրիգոր Գերգերյանից (Գրիկեր), ով առաջարկում էր հանդիպել, քանի որ ինքը երկար տարիներ զբաղվում էր Մեծ եղեռնի թեմայով¹¹: Ճակատագրական հանդիպումը տեղի է ունենում 1965 թ. ամ-

5 Տե՛ս **Dadrian V.**, *The Quest for Scholarship in My Pathos for the Armenian Tragedy and Its Victims, Pioneers of Genocide Studies* (ed. **Totten S., Jacobs S. L.**), “Transaction Publishers”, 2010, էջ 237:

6 Դոկտորական ատենախոսությունը՝ «Գետտո. Մեկուսացման ուսումնասիրություն» (*The Ghetto: A Study in Isolation*) նա ավարտեց 1925 թվականին, իսկ 1928 թ. լույս տեսավ իր գիրքը: (**Wirth L.**, *The Ghetto, “Phoenix”*, 1928): Պետք է նշել, որ սա հրեական թեմայով գրված նրա եզակի գիրքն էր, քանզի հեղինակի հետագա հետազոտությունները մշտապես կենտրոնանում են խմբերի միջև բախումների, ինչպես նաև մեծամասնություն-փոքրամասնություն փոխհարաբերությունների և հակասությունների վրա:

<https://maxwellhalsted.uic.edu/home/ghetto-living-cheap-economics-west-side/the-ghetto-1928-by-louis-wirth/> (մուտք 06.09.2019):

7 Տե՛ս **Werfel F.**, *Die vierzig Tage des Musa Dagh*. 2 Bände, Berlin, 1933:

8 Տե՛ս **Պալաքյան Գ.**, *Հայ Գողգոթան*, Վիեննա, “Vintage Books”, 1922:

9 Տե՛ս **Ambassador Morgenthau's Story**, “Garden City”, N.Y., 1918:

10 Տե՛ս **Dadrian V.**, *The Quest for Scholarship in My Pathos for the Armenian Tragedy and Its Victims, Pioneers of Genocide Studies* (ed. **Totten S., Jacobs S. L.**), “Transaction Publishers”, 2010, էջ 238-239:

11 Գրիկերի արխիվը 2018 թ. թվայնացվել է և տեղադրվել համացանցում Վ.Դադրյանի աշակերտ Թաներ Աբչամի նախագծի շրջանակում: **Historian Taner Akcam launches digital archive documenting the Armenian Genocide**,

<https://clarknow.clarku.edu/2018/12/03/historian-taner-akcam-launches-digital-archive-documenting-the-armenian-genocide/>

(մուտք՝ 06.09.2019): Գրիկերի արխիվը հասանելի է այստեղ

<https://wordpress.clarku.edu/guerguerianarchive/> (մուտք 06.09.2019):

ուանը՝ Բեյրութում: Դադրյանը նշում է, որ այս հանդիպումը որքան մոայլ մթնոլորտում անցավ, այդքան էլ վճռորոշ դարձավ իր համար, քանի որ ինքն առաջին անգամ իմացավ Հայոց ցեղասպանությանը վերաբերվող իրական փաստաթղթերի գոյության մասին, ուստի դա նրա առաջին քայլն էր ցեղասպանագիտության ոլորտ մուտք գործելու ճանապարհին: Գրիկերը ոչ միայն մատնանշեց ուսումնասիրման կարիք ունեցող խնդիրները, այլ նաև ուղղորդեց Վահագն Դադրյանին դեպի արխիվներ՝ հատկապես կարևորելով Երուսաղեմի Հայկական պատրիարքության արխիվները¹²: Գրիկերը Դադրյանին նաև հանձնեց մի շարք փաստաթղթեր, որոնք արդեն իսկ հայթայթել էր, իսկ Դադրյանն իր հերթին 1960-1970-ականների իր բազմաթիվ այցելությունների ընթացքում պատճենեց երիտթուրքերի 1919-1920 թթ. դատավարությունների փաստաթղթերը, որոնք վերաբերում էին թուրքական ռազմական տրիբունալի¹³ արխիվին¹⁴:

2. Հանցագործության վավերականացումը

Հավաքչական աշխատանքը, որին լծվել էր Վ.Դադրյանը, շատ կարևոր էր: Իհարկե, մինչ այդ էլ մի շարք հետազոտողներ և /կամ Հայոց ցեղասպանության վերապրողներ փորձել են հավաքել որոշ փաստաթղթեր կատարված ոճրագործության վերաբերյալ, սակայն միայն Դադրյանն էր, որ այդ փնտրտուքը և նյութի գիտական շրջանառության մեջ դնելու գործընթացը տեղափոխեց համակարգված հիմքերի վրա:

Այս հսկայաճավալ հավաքչական աշխատանքն իրականացնելիս նա իրեն համեմատում էր մի դետեկտիվի հետ, ով զբաղված է հանցագործության իրեղեն ապացույցներ փնտրելով և հավաքելով՝ մի իրավիճակում, երբ հանցանքը չընդունող ոճրագործը ջանում է թաքցնել, վերացնել, ոչնչացնել ոճիրի ցանկացած վկայություն: Տվյալ պարագայում խոսքն օսմանյան պաշտոնական փաստաթղթերի մասին էր, քանի որ ցանկացած դեպքում անհնար էր պատկերացնել, որ, չարագործի գործադրած ջանքերին հակառակ, հնարավոր չի լինի գտնել գուցե պատահաբար պահպանված որոշ ապացույցներ¹⁵:

Նյութահավաք աշխատանքն իրականացնելիս Վ.Դադրյանը հենվում էր չորս հիմնական պահանջների վրա, որոնց պետք է բավարարեին աղբյուրները. ա)

12 Տե՛ս Dadrian V., The Quest for Scholarship in My Pathos for the Armenian Tragedy and Its Victims, Pioneers of Genocide Studies (ed. Totten S., Jacobs S. L.), “Transaction Publishers”, 2010, էջ 40-241:

13 Խոսքն Առաջին աշխարհամարտի ավարտից հետո՝ 1919-1920 թթ., երիտթուրք պարագլուխների նկատմամբ իրականացված դատավարությունների մասին է:

14 Տե՛ս Dadrian V., The Quest for Scholarship in My Pathos for the Armenian Tragedy and Its Victims, Pioneers of Genocide Studies (ed. Totten S., Jacobs S. L.), “Transaction Publishers”, 2010, էջ 241:

15 Տե՛ս նույն տեղում, էջ 242:

նրանք պետք է լինեին՝ հուսալի, վստահելի (reliable), ք) պարզ, որոշակի, ճշգրիտ (explicit), գ) անվիճարկելի, անվիճելի (incontestable), դ) ստուգելի (verifiable): Օրինակ՝ ռուսական, բրիտանական և ֆրանսիական արխիվները, որոնք առատ նյութ են պարունակում Առաջին աշխարհամարտի ժամանակ հայերի ոչնչացման վերաբերյալ, կարող են վիճարկվել թուրքերի կողմից, քանի որ այդ երկրները Անտանտի անդամ էին և Օսմանյան կայսրության հակառակորդներ: Ուստի այդ փաստաթղթերը որոշ ժխտողական գիտնականների կողմից հայտարարվեցին պատերազմական քարոզչություն՝ դրանով իսկ կասկածի տակ դնելով սկզբնաղբյուրների արժանահավատությունը: Իհարկե, պատերազմական պայմաններում որոշ կանխակալություն կարող էր լինել, սակայն փաստաթղթերի մեծ մասն արժեքավոր նյութ էր պարունակում: Ամեն դեպքում Դադրյանը փորձում էր հնարավորինս նվազեցնել այս երեք պետությունների արխիվների փաստաթղթերի օգտագործման ծավալը: Նույն սկզբունքից ելնելով՝ նա փորձում էր հրաժարվել հայկական փաստաթղթերի, հիմնականում՝ վերապրողների հուշերի օգտագործումից՝ խուսափելու համար «վերապրողի կողմնակալության» մեղադրանքից¹⁶:

Այս պարագայում նրա հիմնական նշանակետը դարձան այն աղբյուրները, որոնց նման մեղադրանք չէր կարող առաջադրվել: Առաջին հերթին դրանք թուրքական դատական ատյանների փաստաթղթերն էին, որոնք հավաքագրվել էին հատուկ հանձնախմբերի կողմից՝ Առաջին աշխարհամարտի ժամանակ իրականացված տեղահանությունների և սպանությունների ուսումնասիրության համար: Բոլոր փաստաթղթերը ստուգվել էին պետական պաշտոնյաների կողմից և ունեին «հաստատվում է, որ ճշգրիտ է» մակագրությունը¹⁷:

Բացի այդ, Օսմանյան խորհրդարանի ստորին պալատը ժամանակին իր սեփական քննությունն էր իրականացրել, որի ընթացքում հարցաքննվել էին պատերազմի ընթացքում պաշտոնավարած օսմանյան նախարարները, ինչպես նաև վարչապետը և երկու շեյխ ուլ-խալամները: Ի հավելումն, պահպանվել են խորհրդարանում հայկական հարցի շուրջ ընթացող քննարկումների արձանագրությունները¹⁸:

Եվ վերջապես, աղբյուրների երրորդ խումբը, որի վրա իր ուշադրությունը կենտրոնացրեց Վ.Դադրյանը, Օսմանյան կայսրության պատերազմական դաշնակիցներ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի պաշտոնական դիվանագիտական և ռազմական գրագրությունն էր, որը, ի տարբերություն սուղ, քողարկված լեզվով գրված և աղճատված թուրքական աղբյուրների, մանրամասնորեն բացահայտում է

16 Տե՛ս նույն տեղում, էջ 242-243:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 243-244:

18 Տե՛ս նույն տեղում, էջ 244:

Հայոց ցեղասպանության պատմության բազմաթիվ ծալքեր: Դրանք առատորեն ներկայացնում են Օսմանյան կայսրությունում հաստատված Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի քաղաքացիների տեղեկությունները՝ կատարված զանգվածային հանցագործությունների մասին, հաճախ՝ «գաղտնի» և «հույժ գաղտնի» նշումներով¹⁹: Բավական է միայն նշել, որ Վ.Դադրյանը 1965-1982 թթ. քսանմեկ ուղևորություններ է կատարել Բոննի, Կոբլենցի, Ֆրայբուրգի, Բրեսլաուի, Պոտսդամի և Վիեննայի արխիվներ, որտեղ պահվում էին վերոնշյալ երկու պետությունների արտաքին քաղաքականության և պաշտպանության նախարարությունների փաստաթղթերը²⁰:

3. Գիտամանկավարժական գործունեության հիմնական հանգրվանները

Դոկտորական աստիճանը ստանալուց հետո Վ.Դադրյանը երկար տարիներ (1970-1991 թթ.) սոցիոլոգիա է դասավանդել Նյու Յորքի համալսարանում: Տարբեր ժամանակահատվածներում նա հետազոտող է եղել Հարվարդի համալսարանի «Միջին Արևելքի ուսումնասիրությունների կենտրոնում» և հրավիրյալ դասախոս՝ Մասսաչուսեթսի Տեխնոլոգիական համալսարանում և Դյուքի համալսարանում: 1991 թվականից համագործակցել է Տորոնտոյում (Կանադա) և Քեմբրիջում (ԱՄՆ) գործող Ջորյան հաստատության հետ՝ լինելով նաև վերջինիս ցեղասպանության հետազոտությունների ծրագրի գիտական տնօրենը:

Երբ 1986 թվականին նորաբաց, իսկ հիմա արդեն հայտնի «Հոլոքոստի և ցեղասպանությունների ուսումնասիրման հանդեսում» նա տպագրում էր իր «Թուրք բժիշկների դերը Առաջին աշխարհամարտի ժամանակ իրականացված Օսմանահայերի ցեղասպանության մեջ» հոդվածը, շարադրանքը սկսում է հետևյալ հաստատումով. «Դեռ շատ քիչ բան է գրվել Առաջին աշխարհամարտի ժամանակ հայերի թուրքական ցեղասպանության մասին, մի հանցագործության, որի իրողությունը մինչ այժմ ժխտվում է թուրք պաշտոնյաների կողմից և պատված է մշուշով համապատասխան արխիվային նյութերի հասանելիության արգելափակման պատճառով»²¹:

19 Տեն, օրինակ, The Armenian genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916 (compiled and edited by Gust W.), New York and Oxford, "Berghahn", 2014, 820 pages, Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915-1918 թթ.): (Փաստաթղթերի ժողովածու), կազմ. Օհանջանյան Ա., Եր., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ», 2004:

20 Տեն Dadrian V., The Quest for Scholarship in My Pathos for the Armenian Tragedy and Its Victims, "Pioneers of Genocide Studies" (ed. Totten S., Jacobs S. L.), "Transaction Publishers", 2013, էջ 241:

21 Dadrian V., The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians, "Holocaust and Genocide Studies", N 1 (2), pp. 169-192.

Եվ իրոք, մինչև 1980-ականները Հայոց ցեղասպանության պատմությունը դեռ չէր դարձել Արևմուտքի ակադեմիական շրջանակներում հաճախ հետազոտվող թեմա: Ինքը՝ Վ.Դադրյանը, արդեն իսկ մեծ թվով հոդվածներ էր հեղինակել՝ այս թեմայի տարբեր ծայրերը լուսաբանելով²², սակայն դրանք առանձնապես մեծ ուշադրության չարժանացան: Միայն Նայիմ բեյից՝ Անտոնյանի ձեռք բերած փաստաթղթերի և թուրք բժիշկների դերակատարության մասին հոդվածների հեղինակումը "Holocaust and Genocide Studies"²³ և "International Journal of Middle East Studies" հանդեսներում²⁴, նրան դարձրին Հայոց ցեղասպանության գծով կարևորագույն միջազգային փորձագետ: Վ.Դադրյանի հոդվածները սկսում են հայտնվել ամենահեղինակավոր ակադեմիական պարբերականներում²⁵ ու ժողովածուներում²⁶: Դրանով մեկ այլ հայ ականավոր գիտնականի՝ Ռիչարդ Հովհաննիսյանի հետ միասին նա փաստացի հիմնադրում է Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ենթաճյուղը՝ նոր ի հայտ եկող գիտաճյուղի՝ Ցեղասպանագիտության մեջ²⁷:

Ավելին՝ Վ.Դադրյանը դառնում է ողջ Ցեղասպանագիտության հիմնադիրների առաջին սերնդի ներկայացուցիչներից մեկը, քանի որ չի մնում միայն Մեծ եղեռնի ուսումնասիրության շրջանակներում, այլ նաև փորձում է խորհել ցեղասպանության ֆենոմենի որոշ տեսական դրոյթների շուրջ²⁸:

-
- 22 Տե՛ս **Dadrian V.**, The Events of April 24 in Moscow, "Armenian Review", N 21 (2), 1967, էջ 9-26, **Dadrian V.**, Methodological Components of the Study of Genocide as a Sociological Problem: The Armenian Case, "Recent Studies in Modern Armenian History", Cambridge, MA, "National Association for Armenian Studies & Research", 1972, էջ 83-103, **Dadrian V.**, A Theoretical Model of Genocide with Particular Reference to the Armenian Case, "Sociologia Internationalis" N 14 (1/2), 1976, էջ 99-126:
- 23 Տե՛ս **Dadrian V.**, The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians, "Holocaust and Genocide Studies", N 1 (2), 1986, էջ 169-192:
- 24 Տե՛ս **Dadrian V.**, The Naim-Andonian Documents on the World War I Destruction of Ottoman Armenians: The Anatomy of a Genocide, "International Journal of Middle East Studies", N 18 (3), 1986, էջ 311-360:
- 25 Տե՛ս **Dadrian V.**, A Theoretical Model of Genocide with Particular Reference to the Armenian Case, "Sociologia Internationalis", N 14 (1/2), 1976, էջ 99-126, **Dadrian V.**, The Circumstances Surrounding the 1909 Adana Holocaust, "Armenian Review", N 41 (4), 1988, էջ 1-16, **Dadrian V.**, The Secret Young Turk Ittihadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians, "Holocaust and Genocide Studies", N 7 (2), 1993, էջ 173-201, **Dadrian V.**, The Role of the Turkish Military in the Destruction of Ottoman Armenians: A Study in Historical Continuities, "Journal of Political and Military Sociology", N 20 (2), 1992, էջ 257-288, **Dadrian V.**, The Determinants of the Armenian Genocide, "Journal of Genocide Research", N 1 (1), 1999, էջ 65-80, **Dadrian V.**, Children as Victims of Genocide: The Armenian Case, "Journal of Genocide Research", N 5 (3), 2003, էջ 421-427, **Dadrian V.**, The Signal Facts Surrounding the Armenian Genocide and the Turkish Denial Syndrome, "Journal of Genocide Research", N 5 (2), 2003, էջ 269-279:
- 26 Տե՛ս **Dadrian V.**, Ottoman Archives and Denial of the Armenian Genocide, "The Armenian Genocide: History, Politics, Ethics" (ed. **Hovannisian R.**), New York: St. Martin's Press, 1992, էջ 280-310, **Dadrian V.**, The Role of the Special Organisation in the Armenian Genocide During the First World War, "Minorities in Wartime" (ed. **Panayi P.**), Oxford/Providence, Berg Publishers, 1993, էջ 257-288, **Dadrian V.**, The Convergent Roles of the State and a Governmental Party in the Armenian Genocide, "Studies in Comparative Genocide" (eds. **Chorbajian L. and Shirinian G.**), London: Macmillan and New York, St. Martin's Press, 1999, էջ 92-124, **Dadrian V.**, The Armenian Genocide: An Interpretation, "America and the Armenian Genocide of 1915" (ed. **Winter J.**), Cambridge, Cambridge University Press, 2003, էջ 52-100, **Dadrian V.**, German Responsibility in the Armenian Genocide: "The Role of Protective Alliances" (eds. **Tatz C., Arnold P., Tatz S.**), "Genocide Perspectives II. Essays on Holocaust and Genocide", Sydney: Australian Institute for Holocaust and Genocide Studies, 2003, էջ 79-125:
- 27 Ցեղասպանագիտության ձևավորման և զարգացման մասին տե՛ս մեր «Ցեղասպանագիտությունը որպես գիտաճյուղ: Չևավորման և զարգացման պատմությունը», հոդվածը «Վէմ»-ի ներկա համարում:
- 28 Տե՛ս **Dadrian V.**, Genocide and Historiography, "The Middle East Journal", N 26 (4), 1972, **Dadrian V.**, Cultural and Social-Psychological Factors in the Study of Survivors of Genocide, "International Behavioral Scientist", N 3 (2), 1971, էջ 48-55, **Dadrian V.**, Factors of Anger and Aggression in Genocide, "Journal of Human Relations", N 19 (3), 1971, էջ 394-417, **Dadrian V.**, A Typology of Genocide, "International Review of Sociology", N 5 (2), 1975, էջ 201-212, **Dadrian V.**, The Victimization of the American Indian,

Եվ վերջապես՝ Վ. Դադրյանը դառնում է համեմատական ցեղասպանագիտության ակտիվ ջատագովը: Նա բազմաթիվ հոդվածներ է հեղինակում²⁹, որոնցում համեմատության է ենթարկում Հայոց ցեղասպանությունն ու Հոլոքոստը՝ դրանով փորձելով ակադեմիական շրջանակներում որոշակիորեն «լեգիտիմացնել» Հայոց ցեղասպանությունը, քանզի Հոլոքոստի ցեղասպանական էությունը չէր վիճարկվում գիտական շրջանակներում: **Հայոց ցեղասպանությունը արդեն իսկ ընդունված հետազոտական կադապարի մեջ տեղադրելու միջոցով Վ. Դադրյանը փորձում էր նույն կարգավիճակը ստանալ նաև Մեծ եղեռնի համար:** Սակայն ի վերջո նա հանգում է այն համոզման, որ թեև երկու հանցագործություններն էլ բազմաթիվ նմանություններ ունեն, բայց տարբերությունները նույնպես էական են: Վ. Դադրյանի առանձնացրած հիմնական առանձնահատկությունները հետևյալն էին. հայերը բնաջնջվել էին իրենց բնօրրանում, իսկ հրեաները՝ օտար երկրներում, Հայոց ցեղասպանության ժամանակ նկատվում էր հասարակ բնակչության մեծածավալ ու զանգվածային մասնակցություն սպանության գործընթացի մեջ, իսկ Հոլոքոստը մեծ մասամբ անհատների և առանձին կազմակերպված խմբի ու միավորների ձեռքի գործն էր, և վերջապես՝ հրեաները, ի վերջո, ստացան փոխհատուցում, իսկ հայերի զոհերը մոռացության մատնվեցին:

1990-ական թթ. Վ. Դադրյանը դառնում է մի մեծ նախագծի ղեկավար՝ ստանալով դրամաշնորհ Հ. Ֆ. Գուգենհեյմի հիմնադրամից, որի շրջանակներում էլ նախապատրաստում է իր ամենահայտնի «Հայոց ցեղասպանության պատմությունը. էթնիկ հակամարտություն Բալկաններից մինչև Անատոլիա և Կովկաս» կրթողային աշխատությունը, որը լույս տեսավ 1995 թվականին³⁰: Այս գիրքն իրավամբ դառնում է նրա հետազոտական գործունեության գագաթնակետը, որում ամփոփվել է իր տարիների աշխատանքը: Գրքում Վ. Դադրյանը գալիս է այն եզրակացությանը, որ հայերի բազմադարյա բռնաճնշումները նրանց այնքան խոցելի դարձրին, որ երկար դարեր բացարձակ գերիշխանություն ունեցող թուրքերը որոշեցին լուծել հայ-թուրքական հակասությունները ցեղասպանությամբ:

“Victimology: An International Journal”, N 1(4), 1976, էջ 517-537, **Dadrian V.**, The Anticipation and Prevention of Genocide in International Conflicts - Some Lessons from History, “International Journal of Group Tensions”, N 18 (3), 1988, էջ 205-214, **Dadrian V.**, Towards a Theory of Genocide Incorporating an Instance of Holocaust: Comments, Criticisms and Suggestions, “Holocaust and Genocide Studies”, N 5(2), 1990, էջ 129-143, **Dadrian V.**, The Historical and Legal Interconnections Between the Armenian Genocide and the Jewish Holocaust: From Impunity to Retributive Justice, “Yale Journal of International Law”, N23 (2), 1998, էջ 504-559:

29 Տե՛ս **Dadrian V.**, Common Features of the Armenian and Jewish Cases of Genocide: A Comparative Victimological Perspective, “Victimology: A New Focus” (ed. **Drapkian I.**), N. 4, Violence and Its Victims. Lexington, MA: D.C. Health and Co., 1975, էջ 99-120, **Dadrian V.**, Some Determinants of Genocidal Violence in Inter-group Conflicts—with Particular Reference to the Armenian and Jewish Cases, “Sociologus”, N 26 (3), 1976, էջ 130-149, **Dadrian V.**, The Convergent Aspects of the Armenian and Jewish Cases of Genocide: A Reinterpretation of the Concept of Holocaust, “Holocaust and Genocide Studies”, N 3 (2), 1988, էջ 151-169, **Dadrian V.**, The Comparative Aspects of the Armenian and Jewish Cases of Genocide: A Sociohistorical Perspective, “Is the Holocaust Unique?” (ed. **Rosenbaum A.S.**), Boulder, CO: Westview Press (1996), էջ 101-135, **Dadrian V.**, Patterns of Twentieth Century Genocides: The Armenian, Jewish, and Rwandan Cases, “Journal of Genocide Research”, N 6 (4), 2004, էջ 487-522:

30 Տե՛ս **Dadrian V.**, The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Providence, RI & Oxford, “Berghahn Books”, 1995, 452p:

յան միջոցով: Երկարամյա անպատժելի չարաշահումները, անհետևանք սպանությունները ցույց տվեցին նաև, որ միջազգային հանրության միջամտությունն ունի չափազանց սահմանափակ բնույթ, և ավելին՝ սկզբնական շրջանում միգուցե բարի նպատակներով նախաձեռնված միջազգային ներգրավվածությունը ավելի սրեց իրավիճակը՝ ի վերջո հանգեցնելով հայերի ոչնչացման թուրքական նախագծի իրականացմանը:

Վ. Դադրյանը շեշտում էր նաև իսլամի մեծ դերը կատարվածի մեջ: Օսմանյան կայսրությունը կրոնական պետություն էր, և ցանկացած նորամուծություն դիտվում էր իբրև սպառնալիք ու մահացու վտանգ, որը պետք է բացառել նույնիսկ ամենադաժան միջոցներով: Հայոց ցեղասպանությունը հենց նման մտայնության հետևանք էր:

Վ. Դադրյանի հաջորդ գրքերը, որոնք արժանի են հիշատակման՝ «Հայոց ցեղասպանության մեջ գերմանական պատասխանատվությունը: Գերմանական մեղսակցության պատմական ապացույցի ստուգաբանությունը»³¹ և «Յեղասպանության երաշխիքը: Թուրք-հայկական հակամարտության գլխավոր բաղադրատարրերը»³² մենագրություններն են: Ինքը՝ Վ. Դադրյանը, շատ էր գնահատում նաև իր առաջին գործերից մեկը՝ «Հայոց ցեղասպանության վերլուծությունը միջազգային իրավական տեսակետից»³³: Նա նշում էր, որ դրանով արվել է եզակի աշխատանք, և նույնիսկ հրեից ցեղասպանության ուսումնասիրության դեպքում նման աշխատանք չի իրականացվել: Այս ուսումնասիրությունը մեծ հեղինակություն է վայելում միջազգային իրավունքի մասնագետների շրջանում³⁴:

Վ. Դադրյանի իրականացրած վերջին լիարժեք նախագիծը Թաներ Աքչամի հետ 2011 թ. հեղինակած Ստամբուլյան դատավարությունների մասին հետազոտությունն էր, որում հեղինակները ներկայացրել են այն հսկայական փաստական նյութը, որ կուտակվել է 1919 թ. թուրքական կառավարության կողմից ստեղծված հանձնաժողովի աշխատանքի հետևանքով: Դրանց թվում են դատարանում տրված վկայություն-

31 **Dadrian V.**, German Responsibility in the Armenian Genocide: A Review of the Historical Evidence of German Complicity, Cambridge, MA, "Blue Crane Books", 1996, 304 p.

32 **Dadrian V.**, Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict, New Brunswick, NJ/London, "Transaction Publishers", 2003, 214 p.

33 **Dadrian V.**, Genocide as a Problem of National and International Law: The World War I Armenian Case and Its Contemporary Legal Ramifications, "Yale Journal of International Law", N 14 (2), 1989, p. 221-334, <https://digitalcommons.law.yale.edu/cgi/viewcontent.cgi?referer=https://www.google.com/&httpsredir=1&article=1538&context=yjil> (մուտք՝ 06.09.2019), **Dadrian V.**, The Armenian Genocide: Review of Its Historical, Political, and Legal Aspects, "University of St. Thomas Journal of Law and Public Policy", N 1, 2010, p. 135-194, **Dadrian V.**, The Armenian Genocide as a Dual Problem of National and International Law, "University of St. Thomas Journal of Law and Public Policy", N IV (2), 2010, p. 60-82.

34 Տե՛ս **Татрян В.** Боюсь не успеть осуществить все задуманное. Беседа с историком, геноцидоведом В. Татряном. Записала А. Гулакян, «Голос Армении», 21.11.2002, էջ 1,5:

ները, նիստերի արձանագրությունները, որոնք հետազոտողները ժողովել են և ենթարկել պատմագիտական և իրավական վերլուծության³⁵:

4. Թուրքական ժխտողականության դեմ պայքարի առաջամարտիկը

Մեկ այլ դրդապատճառ, որը Վահագն Դադրյանին ստիպեց իր ամբողջ կյանքը նվիրել Հայոց ցեղասպանության ուսումնասիրությանը, թուրքական ժխտողականության դեմ պայքարն էր: Թուրքիան առատորեն ֆինանսավորում էր ամերիկյան մի շարք հեղինակավոր ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ Փրինսթոնի համալսարանի և Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի թուրքագիտական ամբիոնների գործունեությունը՝ փոխարենը շահելով վերջիններիս լոյալ վերաբերմունքը և նույնիսկ ապահովելով ակադեմիական որոշ շրջանակների ներգրավվածությունը Հայոց ցեղասպանության ժխտողականության մեջ³⁶: Դադրյանի որոշումը՝ պայքարել այդ իրավիճակի դեմ նախևառաջ պայքար էր անարդարության դեմ. «Այս թուրքական կոշտ ժխտողական մոտեցման և թուրքամետ կեցվածքի փորձառությունը մի փաստ է, որը զգալիորեն ամրապնդեց խնդրի մեջ ներգրավվելու և դրա լուծումը փնտրելու իմ որոշումը: Այս ամբողջ իրավիճակից բխող հուսահատության իմ զգացողությունն այժմ անարդարության դեմ ըմբոստության զգացումով էր արտացոլվում: Ես պարզապես չէի կարող ընկրկել պատմական վիթխարի աղետալի ճշմարտության այս անողորմ ալյասերման դեմ: Իմ վրդովմունքի մեծ մասն ուղղված էր ընդդեմ Արևմուտքի այն պատմաբանների, ովքեր թույլ էին տալիս իրենց համագործակցել Թուրքիայի կառավարության պաշտոնյաների և գործակալների հետ և դարձել էին «թուրքական տեսակետի պաշտպաններ»: Այժմ հիմնական հարցն այն է, թե ինչպես կարելի է օգտագործել դա և այս բացասական տրամադրությունները վերածել գործիքների՝ հուսալի և ընդունելի գիտելիքների զարգացման համար: Ես պետք է ընտրեի հետազոտության պատշաճ հանգրվաններ և, հնարավորության սահմաններում, մշակեի ուսումնասիրության կանոններ»³⁷:

Վ.Դադրյանի բոլոր աշխատանքները հենց թուրքական տեսակետները ջախջախող գործեր էին, ուստի նրա յուրաքանչյուր հոդված հեղինակավոր գիտա-

35 Տե՛ս **Dadrian N., Akçam T.**, Judgment at Istanbul: The Armenian Genocide Trials, Oxford and New York, “Berghahn”, 2011, էջ 363.

36 Տե՛ս **Charny I.**, The Psychological Satisfaction of Denials of the Holocaust or Other Genocides by Non-Extremists or Bigots, and Even by Known Scholars, “IDEA” journal, N 6 (1), 2001:

37 **Dadrian V.**, The Quest for Scholarship in My Pathos for the Armenian Tragedy and Its Victims, “Pioneers of Genocide Studies” (ed. **Totten S., Jacobs S. L.**), “Transaction Publishers”, 2010, p. 241-242.

կան հանդեսում դառնում էր ճակատամարտի դաշտ՝ ժխտողական պատմաբանների դեմ: Օրինակ՝ երբ 2008 թվականին իր հիմնադրման 40-ամյակը նշող հեղինակավոր "International Journal of Middle East Studies" հանդեսը վերատպում էր նախկինում տպագրած իր լավագույն հոդվածները, դրանց թվում հայտնվեց նաև Վ.Դադրյանի «Առաջին աշխարհամարտի ժամանակ Օսմանյան հայերի ոչնչացման մասին Նայիմ-Անտոնյանի փաստաթղթերը: Յեղասպանության անատոմիա» հոդվածը³⁸: Պիթեր Ֆոն Սթիվենը, ով հանդեսի նախկին խմբագիրներից էր, այդ կապակցությամբ նշեց, որ «բոլոր հոդվածներից ամենահիշարժանը Վահագն Դադրյանին է՝ Հայոց ցեղասպանության մասին: Այս հոդվածը հղվել է բազմաթիվ գրքերում որպես մի նորարար ու հեղափոխական աշխատություն»³⁹:

Անմիջապես հաջորդ համարում հայտնվում է հայտնի ժխտողական Մայքլ Գանթերի արձագանքը, որով նա վիճարկում է հոդվածի գիտականությունը, ինչպես արել էր դեռ հոդվածի առաջին հրապարակումից հետո, քանի որ կասկածում էր Անտոնյանի կողմից շրջանառության մեջ դրված Նաիմի փաստաթղթերի արժանահավատությանը⁴⁰: Հաջորդ տարի հանդեսը տպագրում է Թյուրքայա Աթայովի արձագանքը, որում վերջինս փորձում է վիճարկել Վ.Դադրյանի հոդվածի արժանիքները: Դրան հետևում է Դադրյանի պատասխանը Մայքլ Գանթերին⁴¹: Եվ սա միայն մեկ օրինակ է, թե ինչպես էին հայ գիտնականի աշխատանքները հայտնվում թեժ քննարկման կիզակետում:

Ժխտողականության դեմ պայքարում Վ.Դադրյանը չափազանց գործնական էր, ուստիև չսահմանափակվեց մաքուր ակադեմիական աշխատանքով: Այսպես, Նյու Ջերսիի կոնգրեսական Սթիվեն Ռոթմանի առաջարկով նա 1999 թ. պատրաստեց և հրատարակեց մի գրքույկ «Հայոց ցեղասպանության թուրքական ժխտողականության հիմնական բաղադրիչները. խեղաթյուրում և կեղծարարություն» վերնագրով⁴²: Դա փաստաթղթերով հարուստ և անխոցելի հետազոտական անաչառությամբ կառուցված մի աշխատանք էր, որն ուղղակի ջարդուփշուր արեց մինչ այդ պատրաստված Վաշինգտոնի թուրքական դեսպանի 22 էջանոց մի հուշագրում բերված ժխտողական փաստարկները, որոնք կազմ-

38 Տե՛ս **Dadrian V.**, The Naim-Andonian Documents on the World War I Destruction of Ottoman Armenians: The Anatomy of a Genocide, առաջին անգամ տպագրվել է "International Journal of Middle East Studies", N 18 (3), 1986, էջ 311–360, երկրորդ անգամ որոշ աննշան ուղղումներով "International Journal of Middle East Studies", N 40(2), 2008, էջ 171–179:

39 **Tucker J.E.**, Excerpt from "The Naim-Andonian Documents", "International Journal of Middle East Studies", N 40 (2), 2008, p.171.

40 Տե՛ս **Gunter M.**, A Reply to Judith E.Tucker's Excerpt of Vahakn Dadrian's Article, "The Naim-Andonian Documents", "International Journal of Middle East Studies", N 40 (4), 2008, էջ 728-29:

41 Տե՛ս **Dadrian V.**, A Reply to Michael Gunter (IJMES 40 [2008]: 728–29), "International Journal of Middle East Studies", N 41 (2), 2009, էջ 357:

42 Տե՛ս **Dadrian V.**, The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification, Toronto, "Zoryan Institute", 1999.

վել էին 60 կոնգրեսականների կողմից առաջարկված Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևը կասեցնելու համար⁴³ ու բաժանվել ԱՄՆ Կոնգրեսի 560 անդամներին:

Իսկ ավելի վաղ Վ.Դադրյանի նախաձեռնությամբ ցեղասպանության և Հոլոքոստի ուսումնասիրության 150 մասնագետներ մի բաց նամակ հրապարակեցին, որում դատապարտում էին թուրքական ժխտողականությունը և հաստատում Հայոց ցեղասպանության փաստը⁴⁴:

Այսպիսին էր Վահագն Դադրյանը. մեծ գիտնական, անսպառ հայրենասեր, ճշմարտության համար պայքարի անզիջում մարտիկ, ով դարձել էր թուրք ժխտողականների թիվ մեկ թշնամին՝ իր կյանքն ամբողջությամբ նվիրելով Հայոց ցեղասպանության ուսումնասիրմանը: Միայնակ, առանց սեփական ընտանիքի, թուրքական սպառնալիքների մշտական թիրախում նա տասնամյակներով անխոնջ ու համառ աշխատասիրությամբ Հայոց ցեղասպանության թեման, որ անփութորեն և միգուցե մտածված մոռացության էր մատնված աշխարհի կողմից, դարձրեց ամենագրավիչ գիտական թեմաներից մեկը և դուրս բերելով մի ժողովրդի տեղային պատմության կարգավիճակից՝ բարձրացրեց մինչև միջազգային ակադեմիական մակարդակ՝ ինքը դառնալով այն հսկաներից մեկը, ում գիտական բացահայտումները և նվաճումները ճանապարհի հարթեցին հարյուրավոր հետազոտողների համար:

2019 թ. օգոստոսի 2-ին Վահագն Դադրյանն ավարտեց իր երկրային կյանքը: Հաշվի առնելով նրա միջազգային հեղինակությունը, անկուտրում պայքարն արդարության և Հայոց ցեղասպանության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման համար և մեծ գիտական ներդրումը ցեղասպանության ուսումնասիրության գործում՝ ՀՀ կառավարությունը որոշում կայացրեց նրա աճյունը տեղափոխել Հայաստան:

Սուրեն Ա. Մանուկյան

Պատմ. գիտ. թեկնածու

43 Տե՛ս **Dadrian V.**, The Quest for Scholarship in My Pathos for the Armenian Tragedy and Its Victims, “Pioneers of Genocide Studies” (ed. **Totten S., Jacobs S. L.**), “Transaction Publishers”, 2010, էջ 250-251:

44 Տե՛ս Statement by Concerned Scholars and Writers, <http://www.genocide-museum.am/eng/150.php> (մուտք՝ 06.09.2019):

Summary

THE CLASSIC OF GENOCIDE STUDY

To the bright memory of Vahagn Dadryan

Suren A. Manukyan

Key words - Vahagn Dadryan, genocide study, sources, Turkish courts, Richard Hovhannisyian, Great Genocide, Holocaust, Turkish denial, distortion, falsification

Vahagn Norayr Dadryan is one of those scholars who have become classic already during their lifetime. Being impressed by his works many of us got involved in the field of genocide study: he was cited, and his attitudes created a whole branch of science. And even those who were not sharing Vahagn Dadryan's theoretical principals admitted his greatness. And for Turkish denial Vahagn Dadryan had become number one rival and target.

Carrying out an extensive collectable work in various archives of the world Vahagn Dadryan transferred on systemized basis the function of collecting and putting into scientific circulation the materials referring to the Armenian Genocide: it was based on four demands, that is, the sources must be: a) reliable, b) explicit, c) incontestable, d) verifiable. For that reason he focused his main work on the documents of Turkish courts, Ottoman parliament chamber of deputies and diplomatic and military papers of Austria-Hungary.

Since the mid-1980's when Vahagn Dadryan became the author of two famous articles in "Holocaust and Genocide Studies" and "International Journal of Middle East Studies" magazines he began to be perceived as the most important international expert on the Armenian Genocide. Articles by Vahagn Dadryan started to appear in most prestigious academic periodicals and collections and together with another Armenian scholar Richard Hovhannisyian he actually became the pioneer of new study of Armenian Genocide in newly emerging field of scientific branch, i.e. Genocide Study.

In 1995 Vahagn Dadryan's monumental work "The History of Armenian Genocide: Ethnic Conflict from Balkans to Anatolia and Caucasus" was published. Alongside with it Vahagn Dadryan became one of the representatives of the first generation of founders of Genocide studies as a separate branch of science as he did not remain in the framework of studying the Great Genocide but also tried to think over the theoretic provisions of genocide as phenomenon. Besides he became the author of many articles where he compared Armenian Genocide and Jewish Holocaust trying thus clearly "legitimize" the Armenian Genocide in academic frameworks.

Vahagn Dadryan has devoted all his life to the struggle against Turkish denial. His all works were the ones crushing Turkish viewpoints so his every article

published in prestigious scholarly magazine became a battlefield against the denialist historians. In 1996 he initiated the publication of an open letter written by 150 specialists of genocide and Holocaust which condemned the Turkish denial and affirmed the fact of the Armenian Genocide, and in 1999 Vahagn Dadryan comprised and published a brochure entitled “The Main Components of Turkish Denial: Distortion and Falsification”.

Резюме

КЛАССИК ГЕНОЦИДОЛОГИИ

Светлой памяти Ваагна Дадряна

Сурен А. Манукян

Ключевые слова – Ваагн Дадрян, геноцидология, источники, турецкие судебные инстанции, Ричард Ованнисян, Мец егерн, Холокост, турецкое отрицание, искажение, фальсификация.

Ваагн Норайр Дадрян был из тех ученых, которые уже при жизни стали классиками. Впечатленные его трудами, многие из нас включились в сферу геноцидологии, его подходы создали основу для целой дисциплины. И даже те, кто не делил теоретические положения Ваагна Дадряна, признавали его величие. А для турецкого отрицания Ваагн Дадрян стал противником и мишенью номер один.

Осуществив большой объем работы по сбору фактов в разных архивах мира, Ваагн Дадрян перевел процесс собирания и введения в научный оборот материалов по Геноциду армян на систематизированные основы, исходя из четырех основных требований: источники должны быть: а) достоверными (reliable), б) точными (explicite), в) неоспоримыми (incontestable), г) проверяемыми (verifiable). Поэтому он сконцентрировал свою основную работу на документах турецких судебных инстанций, Палаты депутатов османского парламента и на официальных дипломатических и военных документах Германии и Австро-Венгрии.

С середины 1980-х годов, когда Ваагн Дадрян публикует две статьи в известных журналах “Holocaust and Genocide Studies” и “International Journal of Middle East Studies”, его начинают воспринимать как важнейшего международного эксперта по Геноциду армян. Статьи Ваагна Дадряна начинают появляться в самых авторитетных академических периодических изданиях и сборниках, и вместе с другим видным армянским ученым Ричардом Ованнисяном он фактически становится пионером исследования Геноцида армян, как отдельного направления во вновь появляющейся дисциплине – геноцидологии.

В 1995 г. выходит в свет монументальный труд Ваагна Дадряна «История Геноцида армян: этническое противостояние от Балкан до Анатолии и Кавказа». Наряду с этим, Ваагн Дадрян становится одним из представителей первого поко-

ления основателей геноцидологии как отдельной дисциплины, так как не остается в рамках исследования только Мец егерна, но также пытается размышлять о теоретических положениях, касающихся феномена геноцида. Кроме этого, он пишет многочисленные статьи, в которых проводит сравнение Геноцида армян и Холокоста евреев, тем самым пытаюсь определенным образом «легитимизировать» Геноцид армян в академических кругах.

Ваагн Дадрян посвятил всю свою жизнь борьбе против турецкого отрицания. Все его работы – это труды, основательно расшатывающие турецкие точки зрения, поэтому каждая его статья в авторитетном научном журнале становилась полем боя против отрицающих историков. По его инициативе в 1996 г. 150 специалистов по Геноциду армян и Холокосту опубликовали открытое письмо, в котором осуждали турецкое отрицание и утверждали факт Геноцида армян, а в 1999 г. Ваагн Дадрян подготовил и издал брошюру под заголовком «Основные компоненты турецкого отрицания Геноцида армян: искажение и фальсификация».

REFERENCES

1. **Tatrjan V.**, Bojus' ne upset' osush'estvit' vse zadumannoe. Beseda s istorikom, genocidovedom V. Tatrjanom. Zapisala **A. Gulakjan**, "Golos Armenii", 21.11.2002, p. 235-236 (**in Russian**).
2. **Palaqean G.**, Hay gogh'got'an, Vienna., "Vintage books", 1922 (**in Armenian**).
3. Avstro-Hungariayi divanagetneri hagh'ordagrut'yunnerə Hayoc cegh'aspanut'yan masin (1915-1918 t't'). (p'astat'gh't'eri zh'ogh'ovac'u), kasm. **Ohanjanyan A.**, Ye'r., "Hayoc cegh'aspanut'yan t'angaran institut", 2004 (**in Armenian**).